ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ԵԼՔ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՊԱՐՈՆ ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հարությունյան.

Ի պատասխան Ձեր՝ 02.10.2017թ. հ.Ե-1/87 գրության, տեղեկացնում ենք, որ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի համագործակցության արդյունքում բարեկարգվել են կրթահամալիրի դպրոցամերձ տարածքները, ստեղծվել են կանաչ լանջեր և պուրակներ:

Ինչ վերաբերում է Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի նախադպրոցական հաստատությունների, ինչպես նաև «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում իրականացվող «Կրթական պարտեզ բնակելի արվարձանում» ծրագրի շրջանակներում կրթահամալիրի տարածքների ցանկապատերի ապամոնտաժմանը, տեղեկացնում ենք, որ այդ գործընթացը հակասում է ՀՀ առողջապահության նախարարի 20.12.2002թ. հ.857 հրամանի հ.2.6 կետին, համաձայն որի՝ «Մանկական նախադպրոցական կազմակերպության հողամասը պետք է ունենա 1.6 մետրից ոչ ավելի բարձրությամբ ցանկապատ»:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ